**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«24» «հունվարի» 2022 թ. № 24-Ն

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ, ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N281-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 9-րդ և 20-րդ ենթակետերը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Սահմանել շրջակա միջավայրի նախարարության հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, փակ բաժնետիրական ընկերության, «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «Անտառային կոմիտեի» գործունեության համակարգման հետևալյ բաշխումը.

**1) շրջակա միջավայրի նախարար Հ. Սիմիդյան.**

ա. իրավաբանական վարչություն,
բ. ռազմավարական քաղաքականության վարչություն,
գ. հասարակայնության հետ կապերի բաժին,
դ. առաջին բաժին,
ե. «Զվարթնոց ավիաօդերևութաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,
զ. «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ,

**2) շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Ա.Մազմանյան.**
ա. միջազգային համագործակցության վարչություն
բ. կլիմայական քաղաքականության վարչություն,
գ. մթնոլորտային քաղաքականության վարչություն,
դ. «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

**3) շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Ա. Մեյմարյան.**

ա. բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչություն,
բ.անտառային քաղաքականության վարչություն,
գ. անտառային կոմիտե,
դ. «Հայաստանի բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
ե.«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
զ. «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
է. «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
ը. «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
թ. «Խոսրովի անտառ» պետական արգելոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն,
ժ. «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն;

**4) շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Գ.Գաբրիելյան.**

ա. ջրային ռեսուրսների կառավաման վարչություն,
բ. ջրային քաղաքականության վարչություն,
գ. հողերի և ընդերքի քաղաքականության վարչություն,
դ. վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչություն,
ե. կենսառեսուրսների կառավարման վարչություն,
զ. թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման վարչություն
է. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

**5) շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քա րտուղար Գ. Գույյան.**

ա. ֆինանսատնտեսական վարչություն,
բ. քարտուղարություն,
գ. մարդկային ռեսուրսների կառավարման բաժին:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի հուլիսի 27-ի «Շրջակա միջավայրի նախարարության

ոլորտային մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, անտառային կոմիտեի, համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, փակ բաժնետիրական ընկերության, պետական հիմնարկի, գործունեության համակարգումը սահմանելու և շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի նոյեմբերի 19-ի N444-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N281-Լ հրամանը:

ՆԱԽԱՐԱՐ Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

1/24/2022

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«24» հունվարի 2022 թ.
ք. Երևան